

ԱՐՁԱԳԱՆԳ

—)(—

Կա՞յ աւելի զարհուրելի զեղծում մը քան հանրային վստահութիւնը չարաչար գործածելով իրեն սեփականել որբին, այրիին եւ վտարեալին ինչքերը: Տարագրելոց յանձնաժողովին կակնարկեմ. այն՝ որուն կոչումն էր որոշ չափով դարձանել բարբարոս կառավարութեան մը ամբողջ մէկ վերջը Պոլսոյ մէջ ապրող հայաստանցիները վտարելու: Գաւառացիներու մէջէն ընտրուած էին անոր անդամները եւ առանց երկար բարակ հաշիւ պահանջելու իրենցմէ, գրեթէ ամէն բան իրենց խղճին քոչորուն թողուած էր, ինչ որ շատ աւելի վատ հանգամանք մը կուտայ զգուցի զեղծումին: Ամէն անոնք որ լաւատես կը փնային այդ զեղծումի զրոյցներուն առջեւ, իրենց համոզման մէջ խաղաած ըլլալու են Յանձնախմբին անդամներէն մէկուն, հէք վտարեալներէ մնացած գոյքերը աճուրդի հանելու եղանակին վրայ: Այս վարպետորդին հրեաներու հետ համախորհուրդ չնչին գներով կը ծախէ եղեր այնպիսի առարկաներ՝ որոնք քառասպատիկ արժէք կը ներկայացնեն հրապարակային աճուրդի մէջ: Եւ բոլոր այս վստահութիւնը, կոկորդը անցընելու համար քանի մը ոսկիներ որոնց ի գուր կսպասէ իր հայրենակիցը, խեղճ հայաստանցին, աւերակ տունի մը մոխիրներուն վրայ նստած: Ինչ որ ալ ըլլայ այս հրէշներուն բարոյական պատիժը, ոչ նուազ պահարկելի կը մնայ Պատրիարքարանի ձախող ընտրութիւնը, որ այսքան կենսական եւ սփոփանքի գործ մը ելեր յանձնելէ այնպիսի վատհոգի եւ շահմուլ խաբեբաներու որոնք զժողովարար սպրդած են ու կը մնան նոյն իսկ ամենէն ազնիւ եւ խղճահարկարար կրող ցեղերուն մէջ:

Ձեզոնմեներու շարք մըն ալ կը ներկայացնեն սա օտար կրօնաւորները որոնք յանուն մարդասիրութեան աշխարհիս չորս կողմէն թափեցան հայոց զժողովարարութեան օրերուն, այն անձնութիւններ որով Պոլսոյ համարաւոր ջրհանկիրները կը վերաբերուին հրկիզուած շէնքի մը գոյքերուն:

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ (26)

Մի քանի օրից յետոյ ձերբակալվեց եւ փոստածի Արմենակը: Էլ աւելորդ համարեցի ապրել իմ բնակարանում եւ տեղափոխվեցի մի ֆրանսացու բնակարան: Նոր բնակարանս Մկրտիչին ցոյց տուի որ նա միայն իմ մասնացոյց ըրած մարդկանց բերէր այդ նոր բնակարանս: Մի քանի շաբաթ առաջ նազարբէկը ինձ նամակ էր գրել եւ ցանկութիւն յայտնել Պոլիս գալու, եւ թէ ես չէի վերաւորվել: Ուրեմն այդ ձեւը արդէն պարզ փաստ է որ նազարբէկը այն ժամանակ բռնապետական յատկութիւններէր բոլորովին ազատ էր եւ շատ քաղաքավար դէպի ընկերներ: Ես մեծ ուրախութեամբ ընդունել էի նրա այդ առաջարկութիւնը եւ գրել որ շուտով գայ: Այդ օրերում սպասում էի նրա գալուն:

Արդէն նոր բնակարանում էի երբ Արմենակը բանտից արձակեցին. նա եկել էր իմ հին բնակարանը, այն տեղից էլ Մկրտիչը բերեց ինձ մօտ:

Ասոնցմէ շատերը ապրուստի եւ նոյն իսկ հարստանալու առիթ մը գտան մեր ազգային դժբախտութեան մէջ: Կոկորդիլոսի արցունքներով, օտար մարդասէրներու սիրտը շարժեցին եւ ահա ֆիորինը, առլարը, ֆրանքը եւ սթէրլինը ահաբախման հոսեցան իրենց հնչիւններուն մէջ խեղդելու համար թշուառութեան հառաչանքը: Բայց օգնութիւններու ընդմիջում յետին թափթփուքները են որ իրենց նպատակին յատկացուցան, մեծ մասը պիտեման հաւաքիչներուն պարբարացման ծախսուելով: Եւ ինչ պայմաններ այդ չնչին օգնութիւնները տալու, ինչ նախատինք կարոտեալներու երեսն ի վեր: Ասոնց մէջ ամէն տեղ արքայնջանողներ եղան, եւ սպեբախտ մակդիրը ստացան: Անխրատութիւն է այս: Եթէ ապերախտ մը կայ, այն ալ այս թշուառներուն շնորհիւ հարբստացողներուն քովը պէտք է փնտրուի: Տարակոյս չկայ թէ իրենց միտքարական վսեմ գործը խղճահարութիւնով կատարողներ ալ գտնուեցան. անոնց փառքը անջնջելի պիտի մնայ. եւ ամենուն սիրտը երախտեօք լի է անոնց նկատմամբ:

Բայց ինչ օգուտ, շատ տեղերէ եւ մանաւանդ Հայաստանէն երբեմն այնպիսի լուրեր կը հասնին որ խիղճը կը պղտորեն, կը ջնջեն այն համարումը զոր կուզենք ունենալ զկէպ օտար մարդասէրներու ամբողջութիւնը: Ֆէրքէնի եղեոնը արդէն խորապէս փնտսեց օտար մարդասիրութեան բարի համբաւին: Հաւատքի վաճառականները զգուշանքի մօտ սպաւորութիւն մը կը թողուն մեր վրայ ամէն օր: Ձեզ կը թողում Ղալասի որբանոցին վրայ պաշարմամբ յարձակումը հովիւ Բերկմանի ձեռքով: Բայց վերջերս Մուշեղ վարդապետի մէկ գրութիւնը խորքերէ որբանոցներուն վրայ ալ աւելի շեշտեց մեր սխուր սպաւորութիւնները եւ պատճառ եղաւ մեր մինչեւ հիմա յայտնած բոլոր խոհերուն: Վարդապետը կը պատմէ թէ ինչպէս աղջիկ ու տղայ քանի մը շէնքերու մէջ լեցուած են այնպէս ինչպէս ոչխարներու բազմաթիւ հօտեր իրենց նեղկուկ փարախը կը գօշուին կուրծք կուրծքի սուսած, անկարող շարժում մը ընելու:

Մտքում շատ բարկացայ Մկրտիչի վրա, որովհետեւ հաստատ համոզված էի որ կառավարութիւնը կարող էր հետեւել բանտից արձակուածներին եւ նոր մարդկանց հետքեր գտնել, Բայց եղածը եղած էր: Երկու թէ երեք օրից յետոյ Արմենակը կրկին եկաւ ինձ մօտ. այդ օրը Մուրասն էլ եկաւ, բայց լաւ չեմ յիշում, արդեօք Արմենակից առաջ եկաւ թէ վերջը: Այդ օրը Արմենակը պատմեց որ բանտում իրան շատ շարժարել էին, որ լրտեսները իրան կրկին հետեւում են եւ զուցէ նորից ձերբակալեն եւ աւելի խիստ տանջանքներ են թարկեն. դրա համար էլ Մուրատից թոյն խնդրեց: Թոյնը ստանալուց յետոյ նա արտասուելով իմ ժամկից մեզանից: Այդ լայնը ինձ վրա շատ վատ ազդեց եւ ես Մուրատին նկատեցի որ լացող տղամարդը նախ քան թոյնի դիմելը իր ընկերներին ձեռք կը տայ կեանքը փրկելու համար: Բայց Մուրատ ինձ կրկին հանգստացրեց:

Իսկապէս շուտով Արմենակին նորից ձերբակալեցին. նրանից յետոյ

Ոչ բարոյական ոչ կրթական ու եւ ինամք այս որբերուն, որոնք օտար պատասպարանքի սակաւաւելի լաւ թէ գէշ պատրաստ հաց ուտող դատարկապորտներ դարձած են: Մինչ նոյն որբանոցներու Տնօրէն Պ. Էյմէնի սենեակը ճոխ կահաւորում, նկարներ, պիպլօնիեր կան, արուեստ ու գեղարուեստ ձեռք ձեռքի տուած կը հմայեն այցելուն: Կրնա՞ս այս սխուր իրականութեանց առջեւ պահել յարգանքի այն մեծ քանակը որուն իրաւունք ունի անկեղծ մարդասիրութիւնը. կրնա՞ս շանտեսել մերիներուն եթէ ոչ բոլորովին անտարբերութիւնը գէթ ծայրայեղ դանդաղութիւնը դէպ ի որբանոցում գործը, եւ որ աւելին է կրնա՞ս հետզհետէ չբարբառել, չնողկալ, մահու չափ չափել մեր դարաւոր թշնամին, թուրքը, մեր ազգային բոլոր ստոպանքներուն սկզբնապատճառը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 16 Յուլիս
Պոլսոյ հանդարտութիւնը խաբուսիկ բան մըն է, Տեսակ մը հիւանդ է այս քաղաքը որ պարբերական տագնապներ կանցընէ: Եւ ցաւալին այն է որ կաշառակեր ոտտիկանութիւնը, ամէնայետին սրիկայ տարրերէ բաղկացած, ձեռքէն եկածը չի խնայեր որպէս զի սարսափը տեւական ընէ, եւ ասիկա կը մտնենք սամիակ նպատակով որ «շահաբեր սուտտուրի» նախորդ տարուան օրերը նորէն ձեռք անցընէ:

Միւս կողմէ նախկին ցոյցերու տարեդարձները միշտ տաղանայի եւ սարսուռի թուականներ են կառավարութեան համար: Այնքան անտրամաբան միտքեր են աստուք, որ կը կարծեն թէ անպատճառ վարդապետէն մինչեւ Աստուածածին խառնակութեանց յատկացուած ժամանակամիջոց մը ըլլայ: Այս պատճառով, այս պահուս ձերբակալութիւնները դարձեալ սկսած են Պոլսոյ մէջ:

Իսկոյն ձերբակալեցին Ղալասին եւ փնտսեցին Մուրատին: Մուրատը թաքնվեց մի բարեկամի մօտ, ուր նրա համար զանազան զեղեր տարան իր արտաքինը փոխելու համար:

Մենք արդէն անաղուց վճռել էինք նազիմին սպանել եւ Մուրատի թաքնվելու երկրորդ թէ երրորդ օրը ես եւ կոմիտէի մի անդամը գրեցինք նազիմի սպանման որոշումը: Այդ վճռագիրը ես պէտք է տանէի իմ նախկին բնակարանս Մկրտիչին յանձնելու որ նա միւս օրը տանէր Մուրատին տար:

Երեկոյան ժամի տասին անցայ դէպի իմ նախկին բնակարանս եւ բաւական հեռուից նկատեցի որ այնտեղ կանգնած են մի քանի ժանտարմներ եւ ոտտիկաններ. մէկ ուղեցի ետ դառնալ. բայց վերջը զգացի որ այդպիսով աւելի կասկած կը հրուերիմ ինձ վրա. սիրտս ամբարջումի վրա եւ մտայ տան փողոցը կամաց սուլելով: Մինչեւ փողոցի միւս ծայրը հասնելը պէտք է ասել որ բաւական անհանգիստ վայրկեան

ձախէն աղէն ձեռք անցուցած նին իրենց քարշիլի բանտերը կը լեցնեն: Իլուրին է մակաբերել թէ կառավարութիւնը յիմար կասկածներու վրայ յենած՝ այս կամայական խստութիւններով չէ որ մտքերը հանդարտեցնելու պիտի յաջողի, եւ վերջ պիտի տայ հայուն արդար բողոքին որ աշխարհիս չորս կողմէն անդադրում կը բխի:

Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը այս օրերս դարձեալ արծարծուեցաւ. Ստեփան փաշա եւ Նորատուկեան փութով կը պատրաստեն Ասլանեան համբաւաւոր օրէնքը, որ պիտի մատուցուի կայսերական հաւանութեան: Այս ծրագիրը, որ հիմնովին կը քանդէ սահմանադրութեան ոգին, պիտի ներկայացուի նաեւ պետական խորհուրդին քննութեանը:

Ազգային գործերու յոյժ փափուկ ներկայ վիճակին մէջ յիշեալ նոր օրէնքին մատուցումը կառավարութեան, ողբալի արդիւնք մը առաջ պիտի բերէ եւ ոչ միայն յաւէտ դժուարութեան պիտի մատնէ յարաբերական խնդիրներուն լուծումը, այլ և ազգային ամէնէն անկապտելի իրաւունքներն ու արտօնութիւնները յաւէտ ոտնակոխ եղած պիտի ըլլան:

Պատրիարքին ուղղակի մեղսակցութեամբ՝ ազգ. վարչութեան այս պժգալի դաւադրութիւնը ազգային միակ օրէնքին զոյլութեանը դէմ՝ ապագայ մեծամեծ աղէտներու դուռ պիտի բանայ: (*) Ս.Ա.Բ.

(*) Յաջորդ թուով ընդարձակօրէն պիտի բացատրենք սահմանադրութեան ուղիին դէմ նիւթուած այս դաւադրութեան պարագաները, որոնց վրայ կանխաւ կը շրախիւրեմք մեր ընթերցողներուն խորին ուշադրութիւնը:

Ներ անցկացրի: Մինչեւ ժամի մէկը թափառելուց յետոյ վերադարձայ իմ բնակարանը, ֆէսի փոխարէն զըխարի գրի եւ նորից գնացի թուղթը Մկրտիչին յանձնելու: Այս անգամ սուսը հսկողներէր ազատ էր. դուրը զարկեցի, իսկոյն բաց արին եւ ինձ յայտնեցին որ իսկապէս իրանց սուսը հսկում էր եւ սիկիւրը լուսամուտի վարագոյրի տակ նստած դիտելիս էր եղել Մկրտիչի հետ միասին, որ երբ ես գայի մի կերպ ինձ զգուշացնէին: Երբ նկատել էին, որ ես առանց զբառնը մօտենալու հեռուցել էի եւ այդպիսով ազատվել շատ ուրախացել էին:

Այդ թուղթը Մկրտիչին յանձնելուց յետոյ նորից տուն վերադարձայ. պատրաստեցի մի ուրիշ մանուս վճռագիր. մոռացել եմ թէ ում համար էր. որոշումը վաղուց էր արուած. այդ էլ մի ատրճանակի հետ պէտք է տանէի Մուրատին յանձնելու:

(Շարունակելի)

Բարիկ, 16 յուլիս

Բարիկի զանազան գպրոցները յաճախող հայ ուսանողներէն այս տարի չըջանաւարտ ելած են .

Բժշկական վարժարանէն Պ. Պ. Զարիֆեան, Աղաւենեան եւ Թագուրեան, որոնցմէ առաջին երկուքը Բարիկի մէջ կամ չըջանաւարտ պիտի հաստատուին, իսկ վերջինը արգէն Պոլիս մեկնած է :

Էջօլ Սանդուղէն Պ. Մարտոս Միհրապետեան՝ ճարտարագէտ-մեքենագէտի վկայականով :

Անասնաբուժական վարժարանէն՝ Պ. Ստեփան Գէրջստէճեան :

Իսկ Պ. Պ. Խաչիկ Սարգսեան եւ Արսալէս Կէտուրեան նշանակելի առաջընթացութիւն ձեռք բերած են իւրեանց յաճախած կամուրջներու եւ ինժեղեաց վարժարանին մէջ :

Մասնաւոր շնորհաւորութեան արժանի է Բ. Արամ Թահաւաճեան, որրի ծանօթ գեղարար արուեստագէտ Պ. Խաչիկ Թահաւաճեանի, որ Բարիկի գեղարուեստից վարժարանին բացած մրցումին մէջ, 50 եւրոպացի ուսանողներու գէմ խիզախելով Ա. մրցանակը շահած է ուրիշ չորս օտարագրի ընկերներու հետ : Պ. Թահաւաճեան աղնիւ եւ աշխատակերպիտասարգ մըն է որ ուսանողական կեանքին մէջ իսկ զիտացած է իր պարտաւոր ճարտի առանց ուրիշներու բնա ըլլալու : Արդէն էջօլ տէգ Առ Տէքոտաթիւն պղինձէ շքարամ ստացած է եւ ձեռքը կը կրէ հեղինակութիւն ունեցող ճարտարապետներու կողմէ արուած վկայագրեր որոնք կը հաստատեն Պ. Թահաւաճեանի ձեռնհասութիւնը իր ճիւղին մէջ :

Անշուշտ Բարիկի հայ եկեղեցիի շինութեան մասնախումբը իր ուշադրութիւնը պիտի դարձնէ հայ ճարտարապետին վրայ, որուն անգամակցութիւնը յիշեալ մասնախումբին իր անուրանալի օգուտները պիտի ունենայ :

Յ. Տ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ո՛րի՞ թիւ ԽՊԱՌՈՒՆԻՔ

—)(—

Այժմ կապրինք այնպիսի դարու մը մէջ, ուր գիտութիւն, արուեստ որչափ որ ալ իրենց կատարելութեան զագաթնակէտին հասած ըլլալու երեւոյթն ունենան՝ սակայն մարդկութիւնը միշտ սաղմապալից վայրկեաններ կանցընէ :

Ընկերական եւ բարոյական աւելի երջանիկ դարերը տակաւին հորիզոնէն շատ աւելի անդին ըլլալ կը թուին : Եւ մեր լուսաւորեալ դարուն մէջ նիւթապաշտութիւնը այնքան խոր արմատներ ձգած է որ հարուստը եւ զօրաւորը սանձարձակ տիրած են երկրագնդին :

Այսօր բնութեան բոլոր նիւթական ու անասնական ազբերները հարուստին կալուածներն են . եւ մարդկութեան բարոյական ու ընկերական բոլոր իրաւունքները զօրաւորին առանձնաշնորհումները : Աւաւակ երեւոյթ մը՝ որքան տխուր այնքան զժբախտ :

Եւ ուրիշ բոլոր ճշմարտութիւններու չափ աւաւոր է նաեւ սա ճշմարտութիւնը թէ մարդկային ազգի մեծագոյն մասին չբաւարութեան ու թշուառութեան բազմաթիւ պատճառներէն մէկն ալ այն անվստահութիւնն է, զոր ընկերութիւնը կը տածէ աղիւսիւն ու զերիւն նկատմամբ : Եւ հաւատացէ՛ք որ այսօր

անասնական աշխարհը վերէն վար պիտի յեղաշրջուէր եթէ աղքատն ալ ունենար իր վստահութիւնը՝ իր վարկը :

Սակայն մարդկութիւնը ամէն ինչ զօրաւորին ու հարուստին ծախելով հաղիւ ուղտուտիւն մը միայն վերապահած է աղքատին ու սկարին : Ուղտուտութիւն մը՝ որ աղքատին անձնական պատուասիրութիւնն ու ձեռնբեցական օգին սպաննու կոչուին ունի :

Իրտուած է որ զօրաւորը եթէ երբեմն ցոյց տուած է միտում մը սկարին օգնելու՝ ընտրած է ամենէն արդարացի միջոցը—ողորմութիւնը, որ մարդու ընկերական ու բարոյական հանրօգուտ ձգտումները փճացնելու միայն նպատած եւ ազգերու համար բարոյական ջարդ մը եղած է :

Թող ներուի մեզ աւելցնել նաեւ թէ միայն քաղաքական գիւտնագիտութիւնը չէ որ կը տառապեցնէ մարդկութիւնը : Եթէ փոքր ու գերի ազգութիւնները հզօր դիւանագէտին զոհերն են, աղքատ ու կարօտ աշխատաւորն ալ հարուստ առեւտրականի գերին է : Եւ եթէ քաղաքագէտի մը համար ամբողջ հնօրեայ ազգութիւն մը չարժեք այնչափ որչափ իր յետին զինուորին ուկորները, շահագէտի մը համար ալ միշտ նոյն արամաբանութեամբ իր դրամարկըն ու տուժարները աւելի կարժեն՝ քան թէ ամբողջ աշխարհի աշխատաւոր բայց տնօրի արարածներու խուռնեքամ լէգէոնները : Բռնակալ ու միլիտանտը մարդկութեան երկու մեծագոյն պատուհասներն են որ կը ծծեն մարդկային ընկերութեան սակորներուն ծուծը : Եւ այդ իսկ է այժմեան աշխարհի նիւթապաշտական բոլոր օրէնքը :

Սակայն արդեօք մարդկութիւնը զիս երկար պիտի հանդուրժէ՞ . — Ի հարկէ ո՛չ : Վստահ եղէ՛ք որ օր մը անպատճառ յեղափոխութեան սուր տակարար եւ զորձակցութեան ծանր լախտը պիտի տան իրենց վերջին հարուստը եւ իրաւունքը պիտի յաղթէ ուժին :

Եւ այդպէս հաւանօրէն պիտի շուղայ աւելի անարատ արշալոյս մը զերիններու եւ աղքատներու համար . աւելի կենսատու արեւ մը որ իր կազմութիւնը ճառագայթները պիտի փոռէ ընկերական դարերու վրայ, ուր փոխանակ բռնաւորութեան եւ աղքատութեան՝ հաւասարութիւն եւ բարօրութիւն պիտի տրեմն : Տիրողն ու վայելողէն աւելի ընկերականն ու արտադրողը պիտի յարգուին եւ բարոյականը նիւթականէն՝ իրաւունքը ուժէն աւելի պիտի պաշտուի :

Եւ այն աստիճանապաշտարար այնքան ստուար եւ հզօր պիտի ըլլայ եղբայրութեան ու բարօրութեան բանակը՝ որքան ստուար բայց սկար է այժմ աղքատներու եւ զերիններու բանակը :

ՏԻԳՐԱՆ ԱՃԻՄԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

—)(—

Լօռանս, Ա. Գ. Չ. — Դրկեցէք Գլէյտրնի քննադատութիւնը՝ եթէ իրօք շահեկան է, ինչպէս կրնէք :

—Պ. Սապահ-Գիւլեան մեզ զրկած է յօդուած մը որով կը պատասխանէ Իրաւունքի նախընթաց թիւին մէջ իր մասին գրուած յօդուածի մը : Տեղի անձկութեան պատճառով յաջող թիւին ձգեցինք անոր հրատարակութիւնը :

—)(—

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Այն ուղին՝ որ Պիթիւի արեւելեան կողմի կորդուաց շղթայի օղակները զօդող «Խուլթիկայ» լեռների ու սարահարթի վրայէն անցնելով ե իր աջ ու ձախ կողմերը թողլով «Փարսիանդ» ու «Մնտիան» կանանչաւէտ ու սիւրուն սարերը, երեք ժամէն կերկարի մինչեւ Խուլթիկ :

Այս ուղիւթեամբ շարունակելով սոյն ճամբան ու մեր ետին ձգելով «Խուլթիկայ» բաժակաձեւ գողարկի դաշան ու իր հինգ հարիւր ուուն զուտ հայ բնակչութիւնը, վերջին անգամ կարօտով ակնարկ մըն ալ կը դարձնենք մեր հանգուցեալ բարեկամ՝ աղնիւ Տուտուխեանի սրտին ու մտքին այնքան մօտիկ սիրելի հայրենիքի կանանչ սարերուն, սաղարթագեղ տունկերուն, սնկան թառի նման իւրարու վրայ շինուած գեղջուկ շնորհալի տուներուն, «ուռնեւրուն ու գիւղի կեդրոն պահան հրեշտակի պէս կանգնած փառապանծ եկեղեցիին ու իր քովի կը համեստ գառնուկի մը պէս մղլած գեղջուկ դպրոցին, կը հեռանանք միշտ դէպի արեւելք, Պապլաք նշանաւոր լեռը . Տատիկ գաւառակը կանցնինք, կերթանք նստիլ Խիզանի արեւմտեան լեռների այն սրտի վրայ՝ ուրկէ Տարունից աղբիւրը իր անմահական ջուրի առատութիւնն այնքան գլխոտ դուրս կուտայ : Այս առատահոտ աղբիւրի եղբրք բուռած դարխտի կանանչներն ու կախարդիչ պտուրակներն շուքին տակ նստելով, հոս այս բարձրութեանէն կը փափագիմ ընթերցողաց յուշիկ յուշիկ ուրուագծել տեսարանի աննման գեղեցկութեան հետ՝ բնավայրի «պատմական» ու «ազգագրական» առաւելութիւններն ու անցքերը :

«Տարունից ակը» կեդրոնական Խիզանի դարխտի ակը համարուած է, այս աղբիւրի ու ջրի նոյն գաւառի վրայ աղբած բարօրութեան համար . տեղացիները ժողովրդական առակով մը այսպէս կը ներկայեն . «Եթէ չեղնէր Տարունից ակը, կերեւէր խիզնայ վատակը» ու ճիշդ ալ այդպէս է : Եթէ այդ պաղ աղբիւրի առատութիւնը չըլլար, Խիզանի բարեբերութիւնը գոյութիւն չունէր :

(Շարունակելի)

ՔՐՈՆԻԿ

—)(—

Գերմանիա գտնուող հայ մը, Պ. Գարրիէլ Դաղլիկեան տեսակ մը գութան հնարեր է, որ ելէքորականութեամբ կը բանի : Գերման թերթ մը մանրամասն տեղեկութիւններ կուտայ այս մեքենայի մասին, որ մեծ ըն-

դունելութիւն պիտի գտնէ : —Իդիբրէ կը հաղորդէն «Մըշակի» թէ ծանօթ գրագէտ Պ. Նուպարեան ամբողջապէս թարգմաներ է Լաֆոնթէնի առականբը : Թարգմանութիւնը Թիֆլիսի մէջ լոյս պիտի տեսնայ :

«Կաւկաս» լրագիրը ըսած է թէ Թիֆլիսի նահանգին մէջ երբեմն գոյութիւն ունեցող ծըխական-եկեղեցական դպրոցներու գոյքն ու շինութիւնները արգէն յանձնուեր են կառավարութեան : Սոյն լրագիրը կաւելցընէ թէ այս օրերս դպրոցական իշխանութիւնը պիտի պահանջէ Թիֆլիս գտնուող հայոց ծխական-դպրոցական գոյքն ու շէնքերը : Եւ դեռ կան փոսած ուղեղներ որոնք կը պահանջեն որ ամէն ջանքերնիս թափենք ու ամէն զոհողութիւն ընենք աս ամէնակուլ կառավարութեան համակրանքը շահելու համար :

Առաջիկայ աշնան Էլմիածինը, իր բոլոր պարտականութիւնները ազգին հանդէպ ընել լինուցնելէն ետքը, մոմագործութեան պիտի սկսի եղբր : Արդէն գործիքներուն մէկ մասը պատրաստ է : Նպատաւորուողը Էլմիածինը պիտի ըլլայ . մաս մըն ալ ներսէսեան դպրոցին պիտի յատկացուի :

Պարսկաստանի մէջ բանտարկուած Սալմաստցի հայերը որ 6000 ըուպլի տուգանք վճարած ու ազատած էին, դարձեալ բանտարկուեր են, սակայն Թէհրանի անգլ. դեսպանին բողոքին վրայ, Ամիր-Նիզամը արձակել է զանոնք, առանց փրկանքը ետ տալու :

Տիգրանակերտէ գրուած նամակ մը միսիթարական կերպով կը նկարագրէ տեղւոյն մանչերու որբանոցը : Ամբողջ ժողովուրդը կը գուրգուրայ որբերուն վրայ եւ առատ նուէրներ կը շնորհէ որբանոցին, որ կը կառավարուի Տեղապահին նախագահութեան ներքեւ գործող հոգաբարձութեան մը ձեռքով :

Մեր Փ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ .

Յուլիս 12ին Թաղ. Խորհրդոյ ընտրութիւն կատարուելով, 178 ընտրողներու 150—160 քուէներով Խորհրդոյ անգամ ընտրուցանէ՞ճեալք՝ Յարութիւն Խոշլեան, Պետրոս Պոլսեցեան, Մարտիկ Գարակէօղեան, Գրիգոր Թամիրեանց, Մ. Կարապետ Սէրէմճեան, Միքայէլ Շիշմանեան եւ Ստեփան Չալիճեան, բոլորն ալ պատուաւոր եւ զարգացած անձեր :

—Կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ նոր գրողներու խումբ մը՝ ձեռնարկած է հրատարակել Վառնաի մէջ «Աշխարհ» անուն շարաթաթերթ մը որուն առաջին թիւը պիտի երեւայ առաջիկայ կերակի : —Թրնօվաի մէջ Իվան Սէմօֆ

անուն անձ մը անձնասպան եղեր է իր մայրը սպաննելէ ետքը : Այս ոճըին շարժառիթը մօր ընդդէմութիւնը եղեր է իր ամուսնութեան գեղատի աղջկան մը հետ զոր Սէմօֆ կը սիրէր : Անգամ մը գժբարտութեան մատնուած , որոշեր է ինքզինքը սպաննել , բայց մտածելով թէ 70 տարեկան պառաւր թշուառ պիտի ըլլայ իր մահէն ետքը , առաջ զայն սպաննելու է ընկողմը իր հարուածով մը :

ՍԱՀ ՊԻՋՍԱՐՔԻ

Տեղույս գերմանական հիւպատոսարանն հասած հեռագրի մը համեմատ , Պիզմարք իշխան , որ ժամանակէ մը ի վեր հիւանդութեամբ կը տառապէր , մեռեր է : Քաղաքական աշխարհէն մեծ գէտք մը կանհետանայ . բայց այս մահուան թողած ապաստութիւնը ո՞րքան հեռու միւս մեծ մարդուն՝ Կլատտիոնի մահուան առաջ բերած համաշխարհային կսկիծէն : Աս ան մարդն է որ ըստ «Բոմբերանիացի զինուորի մը մէկ ոսկորին հետ չեմ փոխեր հայ ազգը» :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բարիդեան կարեւոր թերթէ մը կը քաղենք հետեւեալը :

Սխալ մը գործուեցաւ չպահանջուելով որ Կրետէ գտնուող թուրք զօրքերն անմիջապէս ետ կանչուին : Ասոր տարակոյս չիկայ . ճիշդ չէ սակայն ըսել թէ ասոր պատասխանատուն ֆրանսսն է : Մեր կառավարութիւնը եռանդով աշխատեցաւ որ կըտրուկ լուծում մը տրուի կրէտական խնդրին , բայց ստիպուած էր նկատի առնել զանազան կարծիքներ

Կրէտէի մէջ գործուած սխալներուն հետեւանքները այսօր երեւան կուգան : Սուլթանը վերջ ի վերջոյ սա համոզումը ունեցաւ թէ Կրէտէի մէջ բան մը չէր եղած , ոչ ալ Հայաստանի , ոչ իսկ Պոլսի մէջ : Այս վերջին տարիներէն միայն թէ սալիոյ մէջ իր բանակներուն յաղթանակները կուգէ ըմբռնել : Փառապանծ վեհապետն է որուն քրիստոնէութիւնը վճարեց պատերազմական խոշոր տուգանք մը : Իսլամական աշխարհը նորանուր յաղթանակներ կերպով հազար կտոր թնդանթ ապսպրուեցաւ այն Գերմանիոյ որուն Գայդէրը պաշտպանը կանգնած է անողոք Սուլթանին . և գերման ճարտարագործներուն վճարում ընելով մարդ կը կարծէ թէ ամէն բան արտօնուած է ընել :

Փրանսա , Իտալիա , Անգլիա՝ հայկական կոտորածներու ստեն թուրքիոյ մէջ իրենց ազգակից-

ներու կրած ֆրանսերուն համար հատուցումներ պահանջած էին : Ասիկա չմերժուեցաւ : Բայց ինչպէս պիտի վճարուէր այս հատուցումը : Գրամը կը պահէր : Արդ , երբ հարկ եղաւ ստանալ պատերազմական տուգանքը զոր երաշխաւորեցինք , շահակից տէրութիւնները նորէն պահանջեցին , և որովհետեւ Սուլթանը կը շարունակէր սուտ խուլ ըլլալ , տուգանքին վերջին վճարումէն սեղանաւորական խմբակին վար զնել տուին պահանջուած հատուցման գումարը :

Ասոր վրայ Սուլթանը կը զայրանայ և իբր թէ ապահով ըլլար որ չպիտի պատժուի , աներեսութիւններ կընէ : Ոչ միայն չընդունի , օտարահպատակներուն պահանջները , այլ և կը պնդէ թէ իսլամներն ալ կրնային հատուցումներ պահանջել իրենցմէ սպանուածներուն համար : Յայտնի բան է թէ հայերն էին որ կոտորեցին սա խեղճ թուրքերը :

Ասոր ի պատասխան , չորս մեծ տէրութիւնները՝ որոնք արեւելքի մէջ իրենց ստանձնած պարտաւորութեանց հոգածու՝ Կրէտէ թողած են իրենց նաւերն ու իրենց զօրքերը , անանկ բան մը կրնան և պարտին ընել որ Սուլթանը վերջնականապէս հասկընայ թէ քստմնելի կատակներուն ժամանակը ա՛լ լոյրորովին անցած գացած է :

Անգլիական մամուլը քիչ մը կասկած ներշնչող ուշադրութեամբ կը հետեւի Եէմէնի ապրտամբութեան , որ շատ հեռու է խաղաղանալու միտում ցուցնելէ : Կարծիք կայ թէ Անգլիա մտադիր է Արաբիոյ վրայ տարածել իր ազդեցութիւնը , եթէ ոչ անմիջական տիրապետութիւնը :

Ռէօյթըրը գործակալութիւնը յուլիս 12 թուականով Կ. Պոլսէն հետեւեալը կը հեռագրէ Լոնտոնի թերթերուն .

Եէմէնէ եկած վերջին լուրերունայիլով անիշխանութիւնը կը տիրէ այս նահանգին մէջ , որովհետեւ քաղաքային ու զինուորական իշխանութիւնները ամէն ազգեցութիւն կորսնցուցած են ժողովրդեան վրայ : Ապստամբ շէյխերու թիւը օր ըստ օրէ աւելնալու վրայ է . ասոնք կը շարունակեն ուսեսա բաշխել սովատանջներուն : Եէմէնի զօրաբանակը այժմ կը պարունակէ 48 վաշտ , 2 հեծելազուտ և 9 թընդանթածիզ զուտ , վերջերս 16 վաշտ ընտրիֆ , և 2 լեռնային հրետանի աւելցած ըլլալով անոնց վրայ : Սանաա մայրաքաղաքին հետ հաղորդակցութիւնները պահուած են դեռ : Զինուորական գործողութիւնները դեռ սկսած չեն , որովհետեւ թուրք իշխանութիւնը կը փափագին նախ

շարունակել հունարի բաշխումը կարօտ ժողովրդեան . հակակրօթեան դարման տանելու յոյսով :

—Չորս մեծ տէրութիւնները (Անգլիա , Ռուսիա , Ֆրանսա և Իտալիա) որոշեր են որ Կրէտէի մաքսային սակագիրները 5 0/0 ըլլան : Կը կարծուի թէ Գերմանիա և Աւստրիա չպիտի ընդդիմանան այս որոշման :

—Սուլթանը՝ ծովային նախարար Հասան փաշան աջոսներ է 100,000 ոսկի վար զնել յունական տուգանքէն , Մահմուտէ շոգենաւային ընկերութեան 12 նաւեր պատրաստելու համար : Հաւանորէն Անգլիա պիտի ըլլայ այս նաւերուն յանձնարարութիւնը :

—Կրէտէի ազգային ժողովը գործադիր յանձնախումբ մը ընտրած է , որ , Պ. Սֆաքիատէսի նախագահութեան ներքեւ , հիւպատոսներու աջակցութիւնով նոր կանոնագիր մը պիտի պատրաստէ :

—Կրէտէի մէջ ինքնավարութիւն հաստատելու մասին տէրութեանց համաձայնութեան հետեւանօք ծովակալները իրենց կառավարութիւններէն խնդրած են հաւանիլ թուրք իշխանութեանց և զօրքերուն հեռացմանը Կրէտէէ , Կրէտացոց պահանջին համեմատ :

Նոր վարչութեան կազմակերպութեան ծրագիրը սուրագրեր են :

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Սպանիա , ընկճուած , ջախջախուած , մէկ կողմ նետելով իր քասթիլեան անկորելի գոռոզութիւնը , վերջապէս կը զիջանի հաշտութիւն խնդրել Եանքիներու ահարկու կառավարութեան : Ասոր համար միջնորդ ընտրած է Ուաշինկթընի ֆրանսական դեսպան Պ. Գանպոնը , որ արդէն Մաք Գինլի նախագահին ներկայացուցած է Մատրիտի կառավարութեան խնդիրը հաշտութեան համար :

Արդ , Վաշինկթընի դահլիճը հաշտութեան հետեւեալ պայմանները բանաձեւեր է .

Բօրթօ-Ռիկօն Ամբրիկայի թողուլ . Գուպայի անկախութիւնը ճանչնալ . Լաոսն կղզիներուն գէթ մէկը Ամբրիկայի թողուլ , ինչպէս նաեւ հանքածուխի կայան մը տալ Փիլիպպեաններուն մէջ : Գրամական տուգանքի խօսք չը կայ : Զինադադար չպիտի ըլլայ :

Փիլիպպեաններուն խնդիրը պիտի կարգադրուի Սպանո-Ամբրիկեան խառն յանձնախմբի մը ձեռքով :

Դահլիճը միաձայնութեամբ հակառակ է Փիլիպպեանները Մ. Նահանգներուն կցելու գաղափարին :

Արեւմտեան Հնդկաստանի մէջ Սպանիոյ ծովային իշխանութիւնը

պէտք է դադրի : Մ. Նահանգները Գուպայի և Բօրթօ-Ռիկօի պարագրերուն պատասխանատուութիւնը չպիտի ճանչնան :

Գուպայի և Բօրթօ-Ռիկօի առեւտրական պայմանագիրները Սպանիական թագաւորութեան ուրիշ մասերուն հետ պէտք է ջնջուին :

—Զօրավար Պրովք 119 սպաներով և 5119 զինուորներով Բոռթօ-Ռիկօ ուղեւորեր է :

—Բոռթօ-Ռիկօի Բօնս քաղաքը անձնատուր եղեր է ամերիկացիներուն :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱԶ-ԳԻԼԵԱՆ


—(—) ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԵՐԼԻՆԻ ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻ ԹԵՏՏՈՅ —(—) ԳԻՆ Ի ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Ա Ր

Մուսալլա , հաճի Հասան աղաի օթէլին տակ



Ճաշակաւոր , տոկուն , ձեւաւոր կոշիկ շինել տալ ուղողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի , որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ :

ԳԻՆԵՐ ԳԻՐԱՄԱՆԱՅԵԼԻ

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՉԲՕՍԱՐԱՆ

—(—) ՀԱՃԻ ԲԱՆԱՔՈՐԵ ՃԻՇԻ ԴԷՄԸ Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆեկիւնեան և ընկեր

Արեւստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռնարկ սարքուած այս հովատուն , մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին , այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափակներն իրենց գարնանային ու ամառնային ժամագրայր մը ընեն զայն զբօսելու և ճաշելու , Պոնտոսեան ախորժարի հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ :

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն , յաճախորդները պիտի գտնեն յոյժ դիւրամատչելի գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրների մասին :

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՃՈՒՄ»

—(—) Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս , հասցէտոմս , նամակազուլիս , հարսանեկան հրատարակիչ , մահազդ , ինչպէս նաեւ պրօշիւններ :

Գիներն յոյժ դիւրամատչելի . Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա , թահիզ Կեղովպէտի քանարի խառնութիւն , և Ապտիւրրահման մզկիթին գէմը հայկական գրատունը , Ա. Զարբանէլեանի քով :